ՔԱՂՎԱԾՔ

«Երևանի Տ. Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 25.03.2022թ.-ին կայացած արտահերթ նիստի N 09 արձանագրությունից

Նիստին մասնակցում էին Երևանի Տ. Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի բոլոր 9 անդամները:

Օրակարգում 2022 թ.-ի եկամուտների և ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունն է, որը կապված է 1 ուսուցչին տարակարգ շնորհելու արդյունքում դպրոցին տրամադրվող դրամաշնորհի հետ:

Զեկուցող Էլ. Թումանյանը ներկայացրեց, որ 1 ուսուցչի ԿԳՄՍ նախարարի 21.03. 2022թ.-ի թիվ 427-Ա հրամանի համաձայն շնորհվել է տարակարգ, որի արդյունքում դպրոցին 2022 թ.-ին տրամադրվելու է 107,9 հազ. դրամի դրամաշնորհ /հաշված 23.03.2022թ.ից/: Ըստ այդմ, դպրոցում կա տարակարգ ստացած երկու ուսուցիչ, ինչի արդյունքում 2022 թ.-ին դպրոցին կտրամադրվի 250.0 հազար դրամ:

Նախահաշվում կատարվել է համապատասխան փոփոխությունը:

Հիմք ընդունելով տնօրեն Էլ. Թումանյանի զեկույցը՝ կառավարման խորհուրդը

Որոշեց

հավանություն տալ 2022թ.-ի եկամուտների և ծախսերի ճշտված նախահաշվին և այն ներկայացնել ԿԳՄՍՆ հաստատման:

Խորհրդի նախագահ՝ Ն. Ալավերդյան